ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ **AGREEMENT**

Ք. Երևան

Սույն գիտական փոխկապակցվածության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ «**Համաձայնագիր**») կնքվում է «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամի, որը սույն պայմանագրի հետագա շարադրանքում անվանվում է «**ԱԱԳԼ**», ի դեմս տնօրեն Գևորգ Քառյանի, որը գործում է Հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից,

և

, որը սույն Համաձայնագրի հետագա շարադրանքում անվանվում է «**ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված ճարտարագետ**» մյուս կողմից, իսկ միասին՝ «**Կողմեր**»

հիմնվելով փոխադարձ հարգանքի, թափանցիկության և բարեխղճության սկզբունքների վրա՝ Կողմերը համաձայնվեցին հետևյալի մասին.

Yerevan

This Scientific Affiliation Agreement (hereinafter referred to as the “**Agreement**”) is entered into by and between the “A. I. Alikhanyan National Science Laboratory (Yerevan Physics Institute)” Foundation, hereinafter referred to as “**AANL**” duly represented by its Director, Gevorg Karyan, acting on the basis of the Foundation’s Charter, on the one part,

and

, hereinafter referred to as the “**AANL-affiliated engineer**” on the other part, and collectively referred to as the “**Parties**”

acting in accordance with the principles of mutual respect, transparency, and good faith, the Parties hereby agree as follows:

1. Համաձայնագրի նպատակը

1.1. Սույն Համաձայնագրի նպատակն է հիմնել Կողմերի միջև երկարաժամկետ համագործակցություն, սահմանել այդ փոխադարձ համագործակցության կարգը, ինչպես նաև՝ ապահովել Կողմերի միջև արդյունավետ հաղորդակցության պայմանները:

1. Purpose of the Agreement

1.1. The purpose of this Agreement is to establish long-term cooperation between the Parties, to set forth the terms and conditions governing such cooperation, and to ensure the conditions for effective interaction between the Parties.

2. Համագործակցության պայմանները

2.1. Սույն Համաձայնագիրը ստորագրելով՝ ԱԱԳԼ հետ փոխկապակցված ճարտարագետը պարտավորվում է բարեխղճորեն կատարել սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, պահպանել ԱԱԳԼ բարի համբավը, գիտնականի և գիտական ընկերակցության պատասխանատվության նորմերը, պահպանել ակադեմիական բարեվարքության և ակադեմիական ազատության սկզբունքները:

2. Terms of Cooperation

2.1. By signing this Agreement, the AANL-affiliated engineer undertakes to perform all obligations set forth herein with due diligence, to uphold and safeguard the reputation of AANL, to adhere to the standards and responsibilities applicable to members of the scientific community, and to observe the principles of academic integrity and academic freedom.

2.2. Կողմերը, կնքելով սույն Համաձայնագիրը, պահպանում են իրենց առանձին և հատուկ նպատակներն ու պարտավորությունները: Սույն համաձայնագիրը որևէ կերպ չպետք է մեկնաբանվի որպես Կողմերի միջև նախկինում կնքված կամ ապագայում կնքվող որևէ համաձայնագրի կամ պայմանագրի լրացում կամ գերակայի դրանց նկատմամբ:

2.2. Upon execution of this Agreement, each Party shall continue to retain its separate and distinct objectives and obligations. Nothing contained herein shall be interpreted as amending, modifying, supplementing, or superseding any agreements or contracts previously concluded, or to be concluded in the future, between the Parties.

2.3. Սույն Համաձայնագիրը ստորագրելով՝ ԱԱԳԼ-ն տալիս է իր համաձայնությունը, որպեսզի ԱԱԳԼ-ի հետ փոխկապակցված ճարտարագետը իր գիտահետազոտական արդյունքները համապատասխան հրապարակումներում և/կամ տպագրվող հոդվածներում ներկայացնելիս օգտագործի Հիմնադրամի անունը, իսկ ԱԱԳԼ հետ փոխկապակցված ճարտարագետը պարտավորվում է իր գիտական արդյունքները համապատասխան հրապարակումներում և/կամ տպագրվող հոդվածներում ներկայացնելիս հիշատակել իր և ԱԱԳԼ համագործակցության մասին՝ մատնանշելով ԱԱԳԼ անվանումը:

2.3. Upon execution of this Agreement, AANL hereby grants its consent to the AANL-affiliated engineer to use the Foundation's name in connection with the presentation and/or publication of his or her research or scientific results in relevant publications and/or printed articles. The AANL-affiliated engineer shall duly acknowledge such cooperation with AANL in all such publications and shall expressly identify AANL by name.

3. Համագործակցության և աջակցության այլ ձևերը

3. Other Forms of Cooperation and Support

3.1. Սույն Համաձայնագրով սահմանված համագործակցության շրջանակներում Կողմերի մասնակցությամբ կարող են պարբերաբար կազմակերպվել աշխատանքային քննարկումներ, այդ թվում՝ ԱԱԳԼ հետ փոխկապակցված ճարտարագետի գիտահետազոտական ծրագրերի և/կամ այդ ծրագրերի իրականացման արդյունքում ձեռք բերված տվյալների ներկայացման միջոցով:

3.1. Within the framework of the cooperation defined in this Agreement, the Parties may organize periodic meetings and discussions, including presentations of the scientific research programs conducted by the AANL-affiliated engineer and/or the results and data obtained in the course of their implementation.

3.2. Սույնով Կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագրի արդյունավետ կատարումն ապահովելու նպատակով կարող են ընտրել նաև համագործակցության այլ ձևեր (սեմինարներ, կոնֆերանսներ, դասախոսություններ և այլն), որոնք սահմանված չեն սույն Համաձայնագրում, սակայն համապատասխանում են և բխում են սույն Համաձայնագրի նպատակներից:

3.2. The Parties hereby agree that, in order to ensure the effective implementation of this Agreement, they may adopt additional forms of cooperation - such as seminars, conferences, lectures, or similar activities - not expressly specified herein, provided that such activities are consistent with and further the purpose of this Agreement.

3.3. Սույնով կողմերը համաձայնվում են, որ ԱԱԳԼ հետ փոխկապակցված ճարտարագետը կարող է համագործակցել նաև այլ միջազգային կազմակերպությունների և համապատասխան շահառուների հետ՝ այդ մասին նախապես տեղեկացնելով ԱԱԳԼ-ին։

3.3. The Parties hereby agree that the AANL-affiliated engineer may engage in cooperation with other international organizations and relevant beneficiaries, provided that AANL is notified in advance of such cooperation.

3.4. Սույն Համաձայնագրով նախատեսված համագործակցության շրջանակում, ԱԱԳԼ-ն իր հետ փոխկապակցված ճարտարագետին կարող է տրամադրել՝ ԱԱԳԼ համապատասխան նյութատեխնիկական միջոցներից օգտվելու, ԱԱԳԼ տարածք անարգել մուտք և ելք գործելու, ինչպես նաև՝ թեմատիկ սեմինարներին և կոնֆերանսներին մասնակցելու, դրանք վարելու, իր գիտահետազոտական աշխատանքները ներկայացնելու հնարավորություն։

3.4. Within the framework of the cooperation defined in this Agreement, AANL may provide the AANL-affiliated engineer with access to relevant material and technical resources of AANL, facilitate unhindered entry to and exit from AANL's premises, enable participation in and/or organization of thematic seminars and conferences, and support the conduct of scientific research.

4. Տարաձայնությունների կարգավորումը

4. Dispute Resolution

4.1. Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանումից կամ կիրառումից ծագող բոլոր տարաձայնությունները Կողմերի միջև կարգավորվում են բարեկամաբար, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով։

4.1. Any disputes between the Parties arising out of or in connection with the interpretation or application of this Agreement shall be resolved amicably through good-faith negotiations and consultations.

5. Փոփոխությունները և լրացումները

5. Amendments and Modifications

5.1. Սույն Համաձայնագրում փոփոխությունները և լրացումները կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և պետք է ձևակերպվեն առանձին արձանագրություններով։ Արձանագրություններն ուժի մեջ են մտնում Կողմերի կողմից ստորագրվելուց հետո և կազմում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը։

5.1. Any amendments or modifications to this Agreement shall be made by mutual written agreement of the Parties and shall be set forth in separate protocols. Such protocols shall enter into force upon signature by both Parties and shall constitute an integral part of this Agreement.

6. Ուժի մեջ մտնելը և դադարեցումը

6. Effectiveness and Termination

6.1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից։ Այս Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից որևէ մեկի կողմից՝ այդ մասին գրավոր ծանուցելուց հետո մեկ ամսվա ընթացքում։

6.1. This Agreement shall enter into force upon its signature by both Parties. Either Party may terminate this Agreement by providing one month's prior written notice to the other Party.

6.2. Սույն Համաձայնագիրը կարող է լուծվել նաև կողմերից որևէ մեկի կողմից իր պար-

6.2. This Agreement may also be terminated in the event of failure of either Party to perform its duties

տականությունները պատշաճ չկատարելու դեպքում։

properly.

6.3. Համաձայնագիրը դադարեցնելու դեպքում Կողմերը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի արդեն իսկ սկսված միջոցառումներն արագ և կանոնավոր կերպով ավարտվեն։

6.3. In case of termination of the Agreement, the Parties shall take necessary steps to ensure that the already undertaken measures are completed in an orderly and timely manner.

7. Եզրափակիչ դրույթներ

7. Final Provisions

7.1. Սույն Համաձայնագիրը կազմված է անգլերեն և հայերեն լեզուներով, երկու իրավահավասար օրինակից։

7.1. This Agreement is executed in English and Armenian, in two counterparts of equal legal force.

ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ADDRESSES, PARTICULARS AND SIGNATURES OF THE PARTIES

ԱԱԳԼ / AANL

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հիմնադրամ
«A. I. Alikhanyan National Science Laboratory (Yerevan Physics Institute)» Foundation

ՀՀ, Երևան, 0036, Ալիխանյան եղբայրների փող 2
2 Br. Alikhanyan str., 0036, Yerevan, Armenia
ՀՎՀՀ՝ 01202364
TIN 01202364

Տնօրեն
Director

Գ. Քառյան
G. Karyan

(*ստորագրություն, signature*)

“AANL-affiliated engineer”

Passport / ID No.

Address

Email

(*signature*)